**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ**
**ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2015թվականի N 26

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածը, համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Աղավնաձոր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 6 հերթական նիստի օրակարգը.

1.Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

2.Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի ղեկավարի 2016 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին,

3.Կոտայքի մարզի Աղավնաձորի գյուղապետարանի 2016 թվականի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

4. Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,

5.Կոտայքի մարզի Աղավնաձոր Համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին,

6.Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի ավագանու 2016 թվականի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
22, Կոտայքի մարզ. գ.Աղավնաձոր. aghavnadzor@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 դեկտեմբերի 2015թվականի N 27-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, համայնք ավագանին ***որոշում է՝***

Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի <<Համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 39-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

**1.**Համայնքի բյուջեի եկամտային մասում՝

1) 1112 տողի <Հողի հարկ համայնքների վարչական տարածքում գտնվող հողի համար > 4-րդ սյունակի <3200.0> թիվը փոփոխել <2300.0> թվով:
2) 1121 տողի <Գույքահարկ փոխադրամիջոցների համար> 4-րդ սյունակի <2900.0> թիվը փոփոխել <3500.0> թվով,
3)1139 տողի <Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,սեղմված և հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում վառելիքի,տեխնիկական հեղուկների,սեղմված և հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար> տեղական տուրքի 4-րդ սյունակի <200.0> թիվը փոփոխել <150.0> թվով,
4)1351 տողի <տեղական վճարներ> 4-րդ սյունակի <30.0> թիվը փոփոխել <0> թվով,
5)1331 տողի <Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ> 4-րդ սյունակի <1200.0> թիվը փոփոխել <1060.0> թվով:

**2.**Համայնքի բյուջեի ծախսային մասում՝

1) 1) 2111 տողի 1.1.1 ծրագրի (օրենսդիր և գործադիր մարմիններ) 4112 հոդվածի (պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) 6-րդ սյունակի <0>> թիվը փոխարինել <<1100.0>> թվով,
4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 6-րդ սյունակի <1200.0> թիվը փոխարինել <<1050.0>> թվով,
4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 6-րդ սյունակի <<100.0>> թիվը փոխարինել <<0>> թվով,
4252 ( մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում) հոդվածի 6-րդ սյունակի <<200.0>> թիվը փոխարինել <<351.3>> թվով, 4261 (գրասենյակային նյութեր ) հոդվածի 6-րդ սյունակի <<400.0>> թիվը փոխարինել <<200.0>> թվով, 4822 (այլ հարկեր) 6-րդ սյունակի <<50.0>> թիվը փոխարինել <<0>> թվով:
2) 2133 տողի 1.3.3 ծրագրի (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 4231 հոդվածի (վարչական ծառայություններ) 6-րդ սյունակի <<300.0>> թիվը փոխարինել <<0>> թվով,
3) 21614 տողի 1.6.1 ծրագրի (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 4241
հոդվածի (մասնագիտական ծառայություններ) 6-րդ սյունակի <<200.0>> թիվը փոխարինել <<0>>
թվով, 4819 (Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածի 6-րդ սյունակի <<50.0>> թիվը փոխարինել <<15.0>> թվով, 4823 (պարտադիր վճարներ) հոդվածի 6-րդ սյունակի <<50.0>> թիվը փոխարինել <<0>>թվով:
4) 2511 տողի 5.1.1 ծրագրի (աղբահանություն ) 4213 հոդվածի (կոմունալ ծառայություններ ) 6-րդ սյունակի <<483.3>> թիվը փոխարինել <<0>> թվով:
5)2823 տողի 8.2.3 ծրագրի (մշակույթի տուն ) 4111 հոդվածի (աշխատավարձ և հավելավճար 6-րդ սյունակի <<3984.0>> թիվը փոխարինել <<3584.0>> թվով, 4239 հոդվածի (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 6-րդ սյունակի <<100.0>> թիվը փոխարինել <<0>> թվով. 4112 հոդվածի (պարգևատրումներ, դրամական խրախուսումներ հատուկ վճարներ) 6-րդ սյունակի <<0>> թիվը փոխարինել <<100.0>> թվով:

6)2824 տողի 8.2.4 ծրագրի (այլ մշակութային կազմակերպություններ) 4212 հոդվածի (էներգետիկ ծառայություններ ) 6-րդ սյունակի <<500.0>> թիվը փոխարինել <<570.0>> թվով:
7) 2842 տողի 8.4.2 ծրագրի (քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ) 4819 հոդվածի (նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) 6-րդ սյունակի <<100.0>> թիվը փոխարինել<<0>> թվով:
8)2941 տողի 9.2.2 ծրագրի ( միջնակարգ կրթություն) 4269 հոդվածի (հատուկ նպատակային նյութեր) 6-րդ սյունակի <<140.0>> թիվը փոխարինել <<190.0>> թվով, 4729 հոդվածի (այլ նպաստներ բյուջեից ) 6-րդ սյունակի <<60.0>> թիվը փոխարինել <<27.0>> թվով:
9 ) 3071 տողի 10.7.1 ծրագրի (սոցիալական պաշտպանություն այլ դասերին չպատկանող) 4729 հոդվածի (այլ նպաստներ բյուջեից ) 6-րդ սյունակի <<1240.0>> թիվը փոխարինել <<1540.0>> թվով:
10 )2221 տողի 2.2.1 ծրագրի (քաղաքացիական պաշտպանություն) 4239 հոդվածի (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 6-րդ սյունակի <<30.0>> թիվը փոխարինել <<0>> թվով :
11) 2251 տողի 2.5.1 ծրագրի ( պաշտպանություն այլ դասերին չպատկանող ) 4239 հոդվածի (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 6-րդ սյունակի <<30.0>> թիվը փոխարինել <<0>> թվով:
12) 2321 տողի 3.2.1 ծրագրի ( փրկարար ծառայություն) 4239 հոդվածի (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 6-ր սյունակի <<30.0>> թիվը փոխարինել <<0>> թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԹԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2015թվականի N 28

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1 մասի 8-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին* ***որոշում է***

*1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղական համայնքի ղեկավարի 2016թվականի վարձատրության չափը սահմանել 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ:*

*Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝** **ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2015թվականի N 29

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով,համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել Կոտայքի մարզի Աղավնաձորի գյուղապետարանի աշխատակազմի 2016 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
Աղավնաձոր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 29
որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Աղավնաձորի գյուղապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 14

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Գյուղապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 350000 | 0 | 0 | 350000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 170000 | 0 | 0 | 170000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի խորհրդական | Հայեցողական | - | 1 | 120000 | 0 | 0 | 120000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 170000 | 0 | 0 | 170000 |
| 5 | | Գլխավոր մասնագետ-հաշվապահ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 169000 | 0 | 16900 | 185900 |
| 6 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-.2 | 1 | 118000 | 0 | 0 | 118000 |
| 7 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-.3 | 1 | 118000 | 0 | 0 | 118000 |
| 8 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 117000 | 0 | 0 | 117000 |
| 9 | | Տնտեսվար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 100000 | 0 | 0 | 100000 |
| 10 | | Փականագործ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 90000 | 0 | 0 | 90000 |
| 11 | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 75000 | 0 | 0 | 75000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 2 | 75000 | 0 | 0 | 150000 |
| 13 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 100000 | 0 | 0 | 100000 |
| | Ընդամենը | 13 | | | 14 | | | 10000 | 1863900 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 դեկտեմբերի 2015թվականի N 30-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի և << Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների դրույթներով՝ համայնքի ավագանին* **որոշում է.**

1. Սահմանել Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ,

բբ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ,

բգ. 1001 և մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 25.000 դրամ.

բդ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 50.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

դ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ.

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ

կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը:
3) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:
4) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝ 2500 դրամ.
5) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:
6) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում՝
ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար.
բ.հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի (կամ) սեղմված բնական կամ հեղուկացվածնավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ:
գ. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ ,
ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.
դ. խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.
7) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ յուրաքանչյուր տարվա թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 50.000 դրամ:
8) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, բաղնիքների (սաունաների), խաղատների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ 40.000 դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70.000 դրամ.
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ.
դ. խաղատների կազմակերպման համար՝ 1.000.000 դրամ.
ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300.000 դրամ.
զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 120.000 դրամ:
9) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝
ա. ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500դրամ
գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ
դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:
10) Աղավնաձոր գյուղական համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3000 դրամ:
11) Աղավնաձոր գյուղական համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 դրամ:
11.1) Աղավնաձոր համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել է 250.000 դրամ:
12) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն

նրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 10.000 դրամ
13) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճա սահմանել՝ 15000 դրամ
14) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար տեղական վճարը սահմանվում է յուրաքանչյուր մասնակցից 5000 դրամ:
15) Համայնքի կողմից աղբահանություն կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել ընտանիք յուրաքանչյուր շնչի հաշվով ամսեկան 100 դրամ , իսկ կազմակերպությունների համար յուրաքանչյուր ամիս 100 դրամ:
16) շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել 15000 դրամ:

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2015թվականի N 31-Ն

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով,համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել համայնքի 2016 թվականի բյուջեն՝
1) եկամուտների գծով՝ 30176.0 հազար դրամ,
2) ծախսերի գծով՝ 30176.0 հազար դրամ,
2. Հաստատել Աղավնաձոր համայնքի 2016 թվականի բյուջեի եկամուտները ըստ ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի՝ համաձայն հավելվածի հատված 1-ի:
3. Հաստատել Աղավնաձոր համայնքի 2016 թվականի բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 2-ի:
4. Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 3-ի:
5. Հաստատել Աղավնաձոր համայնքի 2016 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 6-ի:
6. Թույլատրել համայնքի ղեկավարին 2016 թվականի բյուջետային տարում անհրաժեշտության դեպքում սույն որոշմամբ հաստատված հավելվածում բյուջեից հատկացումները վերաբաշխել բյուջետային ընդհանուր ծախսերի մինչև 10 %-ի չափով:
7. Սույն որոշման հավելվածը համարվում է սույն որոշման անբաժանելի մասը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար** **ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Հաստատված
Աղավնաձոր համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14 -ի N 31 -Ն որոշման
Հավելված

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՂ ԱՂԱՎՆԱՁՈՐ

# 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հրազդանի տեղական գանձապետական բաժանմունք
(համայնքի գործող սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______ Մխիթար Ցոլակի Դանիելյան
( անունը, հայրանունը, ազգանունը)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Աղավնաձոր, aghavnadzor@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2015թվականի N 32

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով , համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի ավագանու 2016 թվականի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԽԻԹԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված

Աղավնաձոր գյուղական համայնքի ավագանու

2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 32 որոշման

# ԱՂԱՎՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## 2016 թվական

| ՀՀ | Համայնքի ավագանու նիստի օրը | Համայնքի ավագանու նիստի օրակարգային հարցեր | |
|---|---|---|---|
| 1 | Հունվարի 14 | Համայնքի 2014 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| | | | |
| | | | |
| 2 | Մարտի 14 | Համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն, համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին | |
| 3 | Ապրիլի 14 | Համայնքի 2015 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| 4 | Հունիսի 14 | հանրությանը ներկայացվող հաշվետվության քննարկում | |
| 5 | Հուլիսի 14 | Համայնքի 2015 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| 6 | Սեպտեմբերի 14 | | |
| 7 | Հոկտեմբերի 14 | Համայնքի 2015 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| 8 | Դեկտեմբերի 14 | Տեղական հարկերի, տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին, համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին, գյուղապետարանիաշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին, Հաջորդ տարվա բյուջեի հաստատում | |